

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յարգելի ազգային մը՝ Հանդիսիս խմբագրութեան ուղղած է հետեւեալ հարցումները, որոնց կը պատասխանենք յօժարութեամբ:

Ա. — «Հայ Եկեղեցին հակառակ է նուազարանի գործածութեան»:

Բ. — «Կանայք կրնան մասնակցել երգչախմբեան»:

* *

Ա. — Առաջին խնդրոյ լուծումն յարմարագոյն կը համարիմ որոնել քրիստոնէութեան և յատկապէս մեր նախնաց սովորութեան մէջ:

1. — Բոլոր հին կրօնները, աստուածապաշտ թէ հեթանոս, ընդունած էին նուազարանաց գործածութիւնը որպէս պաշտամանց մէջ, ինչպէս գիտենք ի պատմութենէ: Հին կտակարանի ընթերցումն ամէն օր մեր աջից կը դնէ այն մեծ կարեորութիւնը՝ զոր կ'ընծայէր անոնց ընտրեալ ժողովուրդը, և որոցմով ճոխ էր Եհովայի տաճարը:

Քրիստոնէութիւնը, ժառանգ Աբրահաման հաւատաց, յօժարութեամբ իւրացուց անոր աստուածապաշտական ինչ ինչ լաւ մասերը, բայց դանդաղեցաւ ընդունել նուազարանաց մասնակցութիւնը հոգևոր պաշտամանց, կղեմէս Աղեքսանդրացին Բարու վերջն յայտնապէս կ'ըսէ՝ Թէ

«Միով գործեաւ, բանիւ եւթ հանդարտութեան՝ որով մեքս վարիմք, պատուեմք զԱստուած, և ոչ ևս հետմէ սաղմոսարանաւ, և փողով և թմբակաւ և սրնգաւ, որովք այնոքիկ վարէին ոյք ի մարտ պատերազմի զանձինս մարզէին» (Գաւտիարակ, Բ, Գ): Կրնանք հետեցնել թէ ուրեմն յառաջ քան զինքն ալ՝ մուտ չէին գտած անոնք եկեղեցւոյ մէջ, և ոչ իսկ յետոյ կ'երկին: Նախկին դարերու Հարց հակառակութիւն ունէին անոնց դէմ, որովհետեւ նախ հեթանոսաց և ապա քրիստոնէայ մեծատանց ձեռներուն մէջ դարձած էին հեշտասէր մեղկութեան և անառակ նուազածութեան գործիներ, ինչպէս կը նկարագրէ նոյն Աղեքսանդրացին: Զայս կը հաստատէ և Սեբերիանոս Ե դարուն՝ երբ կ'ըսէ. «Զէ ինչ չար տաւիղն, այլ զի աղտեղի երգոցն եղև գործի (ի խրախճաւ նութիւնս). որպէս թէ զաստուածեղէն օրն՝ նութիւնսն երգէր իբրև զառաջինն, չէր պիղծ...: Զէր բամբասանաց ճնարն՝ եթէ ճնարաւն Աստուծոյ երգս ոք մատուցանէր» (Ճառք, 136-7): Սակայն պիտի զար ժամանակ մը՝ յորում քրիստոնէայ իւրոպան պիտի երգործէր Եմեսացւոց եպիսկոպոսին փափաքած ծրագիրը. պիտի ազատէր գնուազարանն այն դատապարտութենէ՝ որ չարաչար գործածողին կը պատկանէր, և ոչ անգիտակից գործւոյն, որ ի բնէ բարի էր և բարերար ազդեցու-

թեանց աղբիւր, և պիտի մուծանէր զայն տանարէն ներս: Այս եղաւ Ը դարուն, ուր առաջին անգամ և իբր առաջին նուագարան՝ ընդունուեցաւ աստուածային պաշտամանց մէջ երգիւնը (Գողշէր, Բար. Աճբն. ԺԶ, 409), և որ ըստ այլոց մինչև ի դար կ'իջնէ՝ Վիտաղիանոս պապին օրերը (Եւչէն, Պոմ. Պորթ. Է, Բ): Իսկ ուրիշ գործիներ սկսան ժէ. դարուն (Գողշէր, ԺԵ, 433):

2. — Ինչպէս վարուեր է Հայ Եկեղեցին նուագարանաց հետ, Ուշադիր հետազոտութիւն մը հին մատենագրութեան պիտի համոզէ զմեզ, թէ կարծուածին հակառակ՝ Հայը ևս շատ վաղուց մեծաբեր և նոյն իսկ պնդապա կարեր են անոնց՝ կրօնական պաշտամանց մէջ, Ահաւասիկ իմ փաստերս:

Հարկ չկայ հաստատելու՝ թէ հոգևոր պաշտօն մ'է մեռելոց յուղարկաւորութիւնը: Արդ՝ հայ անդրանիկ քրիստոնեայ թագաւորին՝ Տրդատայ թագման մասին կը կարդանք, թէ մինչդեռ թաքորին առջևն հոգևոր երգեր կը հնչէին, «զկնի զազադացն», կ'ըսէ անանուն պատմիչը, կը գոչէին «փողը և տափը ուրոց» (Հ. Ալիշան, Տեղ. Այր. 392): Եթէ պատմիչս հնութիւնն անորոշ է, սակայն ապահով է «պնծի փողոց» գործածութիւնը հայ հեթանոսութեան շրջանէն, ինչպէս Արտաշիսի թագման առթիւ կը պատմուի (Թորեն. Բ, 4): և որ այժ կու տայ Տըրդատայ մասին աւանդուածին: Յետոյ Փաւստոսի վկայութենէն ալ գիտենք՝ որ նուագարանք անբաժան եղեր են միշտ ու մնացեր այդ հանդիսէն մինչև ցՍ. Ներսէս. «Փողովք և փանդօք և վնօք, կ'ըսէ պատմիչը, զմեռեալսն յուղարկէին»: Ներսէս, ժառանգորդ միւս Ս. Հարց դժկամաւ կուրթեան նուագարանաց դէմ, և նուագարաններէն աւելի՝ անոնց հնչեցուցած ողբերգութեանց, սահմանեց կատարել թաղումը «լոկ սաղմոսիւր և օրհնութեամբ», առանց գործեաց, թէ իւր մեծ հեղինակութեամբ յաջողեցաւ ի սպառ լռեցնել զանոնք, տարակուսելի է, երբ նկատենք՝

որ յետ իւր մահուան՝ իսկոյն դարձեալ կը հնչեն անոնք համարձակ (Ե, 1Ա), և այլ ևս չեն դադրեր. և ուրիշ ոչ մէկ Հայը կ'ընդդիմանայ անոնց: Այնպէս որ Թ. դարուն Սիւնեցի Վասակ Գաբուռի թագուն կը կատարուի դեռ «ողբերգական պարուց փողոց և քնարահարաց» (Ուրբէ. 129): Յաջորդ դարուն՝ Աջոտ Սիւնեցոյնը կը լինի նոյնպէս «դամբանական փողովք և ողբերգական քնարահարիք» (նոյն, 1Է): Եւ Գրիգոր Մագիստրոս կը պատմէ իւր տոհմայնոց փոխադրութիւնն ի հանգիստ՝ «դամբանական քաղահնոյ ձայնի և ոսգեակի զուլմամբ» (Նմվ. ԺԱ): Հայոց թագաւորութիւնը և իշխանութիւնը կը մարին հեթանոսաց բռնութեան ներքև, կը լռեն նաև անոնք դամբանական փողերը, Բայց անոնց փոխան՝ զազաղին կ'ընկերէ տակաւին ժէ. դարու սկիզբը՝ ժամահար կամ կոչնակ մը, «ժամահարն յառաջ» (Գր. Տաթև. Հրցմ. Ժ, Ե), որ յեկեղեցի կոչելէ տարբեր նպատակ մ'ունի այդ տեղ, սրբազան նուագարան մ'է, սոյն պաշտօնով արդէն ծանօթ ի դարէն իսկ, ուր Մամիկոնեան Վահանայ պատերազմաց մէջ կը հնչէ թագմութեամբ՝ կրօնաւորաց ձեռքով (ՅՏ. Մամիկ. 1832, 50):

Դիտելի է՝ որ յիշեալ պատմական գործիները մինչև եկեղեցւոյն մէջ չեն մտած, կամ գոնէ չի պատմուի թէ մտած լինին: Բայց անոնց փոխարէն սրբաւայրն ընդունել է ուրիշներ, թէև աւելի անկատար: Եւ նախ քոյրը, որ ի սկզբան շինուած սիրամարգի փետրէ կամ ճղղէ՝ ճանձներ Սրբութենէն հեռի պահելու համար, յետոյ Հայոց ճղղ կը պղնձանայ, և կը դառնայ հնչական գործի մը: Այս փոփոխութիւնն արդէն կատարուած կը տեսնենք Ը դարուն, ուր Յովհան Խմաստասէր կը յիշէ «ճշոցացն հարումն» (141). և հարումն՝ գործուոյս վրայ երաժշտական իմաստով միայն կրնար գործածուիլ, ճիշդ ինչպէս յետոյ՝ ԺԲ դարուն՝ Շնորհալին պիտի ըսէ, «Եւ ըզրնոյղ ճշոցանին» (Ողբ Եղիսիոյ): Ուրիշ ժամանակակցի մը՝ Մխիթար Գոշի վկայու-

թեամբ, այդ հնչողներն էին ըջոցին վրայ կախուած գանգակներ, որոցմէ այդ դաւրուն կը տեւեմնէր նաև քորդուտիւն լարեւուն վրայ, որոյ համար Հայք կը մեղադրուէին օտարներէ, ինչպէս կ'ըսէ նոյն վարդապետը նամակի մը մէջ. «Եւ ոչ զանգակ ունի ի քորդուտան և կամ չունենի ճերձուած է. այլ որպէս ի քրոցն է՝ ազդ առնել միայն խորհրդական արթիցն, և ահաւոր առնել զժամ Պատարագին ի լսելիս» (Արրտ. 1901, էջ 61): Ուրեմն բաւական զգալի էր այդ գանգակաց հնչումը, որով կարծեմ շփոթուելու չեն այժմեան բոժոժներուն հետ: Այդ «զանգակը» բուրուռառին վրայ՝ տակաւին կ'երևին Ժեղարու սինդր (Դր. Տաթ. Հրցմ. Թ, Ծ), ինչպէս մինչև ցայսօր՝ բոժոժի վերածուած: Թամենայն դէպս՝ ըջոցն ու բուրուռառ դարերէ ի վեր ձայնարկու գործիներ դարձած են մեր եկեղեցւոյ մէջ իսկ: Ժեղարուն աւելի բազմացած կը գրտենէր գործինը: Առաջիկ Պարիսիցիէն կը պատմէ՝ թէ երբ Շահաբաւ յԱզուլիս կը մտնէր, տեղույն քահանայը և պաշտօնայն՝ զգեստաւորեալ, խաչով և աւետարանով, խնկով ու մոմով, «զանգակօք և ծնծղայիք ելանէին ընդ առաջ շահին» (Իէ), բնաւ տարակոյս չկայ՝ թէ այդ նուագարանը, խառն միւս սրբութեանց հետ, եկեղեցւոյ մէջ իսկ կը գործածուէին, ինչ որ աւելի որոշակի կը հաստատուի 1650ին ի կոստանդնուպոլիս գրուած տօնացուցէ մ'ալ, յորում կը կարդանք՝ թէ փառք ի բարձանք՝ «ծնծղա, ժամանար, զանգակ և այլ երգարանս հնչեցուցանեն»: Ինչ են «այլ երգարանք»՝ չգիտեմ. բայց ամէն ընթերցող կրնայ հասկնալ՝ թէ այդ ժամանակ արդէն ի գործածութեան էին զանազան հնչական նուագարաններ, — յայտնի չէ երբ մտած, — սկսեալ Վասպուրականէն մինչև ի Բիւզանդիոն. ուրեմն բոլոր Հայութեան մէջ:

Յ. — Ինչ կը հետևի մեր ցարդ տեսանքներն և ըսանքներն: Այս՝ թէ Հայ եկեղեցին իւր սկզբնաւորութենէն մինչև վերջերը՝ սկզբամբ և իրապէս ընդունել է

նուագարանաց գործածութիւնը հոգևոր պաշտամանց մէջ: Այդ գործինը մասամբ բնիկ էին իրեն, և մասամբ փոխառաւ դրացիներէն՝ առանց խորշուել, առանց ծիսական խտրականութեան: Երգն ու երգարան ծէս չունին, արուեստի մասն են, և արուեստը՝ քաղաքակրթութեան ու մարդկային բնութեան պահանջն է: «Ազգումն երաժշտական եղանակին, կ'ըսէ Համբրոնացին իմաստուն կերպով, ըստ որում ունի զօրութիւն՝ շնորհատուցեալ զարքուցէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշըջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտեալ է յինկի. վասն այնորիկ և եկեղեցական աւանդոյրէն ընկալաւ զայն յարտաբնոցն» (Մեկն. Պտր. 482): Այդպէս է, արտաքին արուեստը տուաւ Եկեղեցւոյ՝ երգն ու նուագարանը բարձրագոյն նպատակով մը, թէ յԱրեւել և թէ յԱրեւմուտս: Արեւելեան արուեստն անկատար, անկատար գործինիւր տուաւ. արևմտեանը կատարեալ, լաւագոյններն աւանդեց:

Անցան դարեր, և Արեւելքն Արևմուտքի մօտեցաւ, ճանչցաւ անոր քաղաքակրթութիւնը, իւրացոյց անոր սխորձակները, և այսօր եկեղեցական երաժշտութեան մէջ ինքն ալ կ'ուզէ լաւագոյնն ունենալ, այնպիսին՝ որ «ընդոստուցեալ զարթուցէ զմիտս». կարելի է արդար է ժխտել զայն իրեն: Քաղաքակրթութեան այս պահանջը լռեցնելու համար՝ հարկ է նախ հայ տնէն վտարել եւրոպական դաշնակը, դաշնամուրը, ջութակը, ֆայց եթէ ասոնց պիտի մնան Հայուն յարկին ներքև իրենց դիւթիչ հրապոյրով, և նա Աստուծոյ տան մէջ պիտի երթայ լսելու Հինցած աղմուկան գործինները, որոնց այժմ չի յարմարի նուագարան կոչումն իսկ, ապա «յարտաբնոցն» ընդունուած եկեղեցական երաժշտութիւնն այլ ևս այն չէ «որպէս պարտն է», և գոյութեան իրաւունքն անգամ կը կորուսանէ: Կը կարդանք Յայտնութեան մէջ՝ թէ «Քսան և չորք երկցունքն ունէին իւրաքանչիւր քնար, և

օրհնէին երգս նորս » (Ե, 8)։ Երկնից ար-
քայութեան սեպհական գործինքն ինչո՞ւ
չհնչեն նաև Եկեղեցւոյ մէջ նոր ու դաշ-
նակաւոր երգեր։ « Զէ չար տաւիդն եթէ
զաստուածեղէն օրհնութիւնն երգիցէ. չէ
բամբասանաց քնարն եթէ քնարաւն Աս-
տուծոյ երգս ոք մատուցանիցէ »։ Հին
արեկեցւոյ մը ձայնն է այս. մեր ձայնն
է ուրեմն։

*
*
*

Բ. — Երկրորդ խնդիրը՝ կանանց մաս-
նակցութեան մասին, դարձեալ կը մղէ
զիս հնախօսութեան մէջ փնտռելու իւր
արմատն ու լուծումը։

1. — Եկեղեցւոյ երկնաւոր Հիմնադիրն
երբ հաստատեց աստուածային խորհուրդը
և բաշխեց աշակերտաց, ինքն և իւր փոք-
րիկ հօտը միաբան «օրհնեցին» և հետա-
ցան վերնատնէն։ Հաւատացելոց հաւաքա-
կան օրհներգութեան անդրանիկ փորձն
էր այդ։ Առաքելական դարու ըրիստոնէից
ընտանի և հանելի երգերն էին Դաւթի
սաղմոսները, յաճախ յիշուած և յանձ-
նարարուած Յիսուսի աշակերտներէն (Ս
կորնթ. ԺԻ, 15. Եփես. Ե, 19. Յակ.
Ե, 13)։ Նոյնքը կը նուագէին նաև հո-
գևոր հաւաքմանց մէջ. բայց բնականա-
նապէս անոնք միայն երգելով՝ որ կը ճա-
նաչէին անոնց եղանակները։ « Յորժամ
ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք
ի ձէնջ եթէ սաղմոս ունիցի, եթէ վար-
դապետութիւն ունիցի... ամենայն ի շի-
նած լինիցի » (Ս կոր. ԺԴ, 26)։ Յատուկ
երգիչ պաշտօնանց չկան, ամէն մարդ որ
գիտէ՝ կարող է մասնակցիլ սաղմոսին։
Կանայք ալ ունին մի և նոյն իրաւունքը։
Գ դարու սկիզբը՝ Տերտուղիանոս զովե-
լով ըրիստոնէայ ամուսնաց ներդաշնակ
ու բարեպաշտ կենցաղավարութիւնը, կ'ը-
սէ. « Անխոռով առաջի կան սրբոյ Պատա-
րագին, միաբան երգեն երգս և սաղմոսս,
ի իրախոյս միմեանց են ի զովիլ զԱս-
տուած » (Պլեօք. Կենց. Քրիս. Բ, Թ)։
Եւ ո՞ւր աւելի յարմար էին այդ երգերն

ու զովութիւնք՝ քան Պատարագին առջև
և պաշտամանց մէջ։ Այս տեսութիւնս
կ'ամրանայ հետագայ յայտնագոյն օրի-
նակներով։

Դ դարուն՝ մեզ շատ մերձաւոր քա-
ղաքի մը, Կեսարիոյ հայրապետը Ս. Բար-
սեղ կը հաստատէ զայս, և որոյ խօսքերն
հայ թարգմանիչը կը ձուլացնէ՝ իւր իսկ
զգացած ախորժական ազդեցութեան ներ-
քն։ « Մ'ըչափ ևս առաւել (քան զժող)՝
իցէ գեղեցիկ և վայելուչ եկեղեցի Աստու-
ծոյ իւրովք փառաւորեալ և մեծամեծ ժո-
ղովրդովք, որ զձայնս խառնուածոյս զեղ-
գեղեալս նուազս նուազ հանէ իւրովք,
որդուիքն, հանդերձ աղօթիւք և խնդրուա-
ծովք, արամբք և կանամբք և խառնալուսչ
սղայոց, և որ երգեն զերգս օրհնութեան »
(Վեցօք. 1830, 80)։ Նոյնը կը հաստա-
տեն Գրիգոր Աստուածաբան (ճառ Ի) և
Սողոմոն ևս (Պտմ. Եփ. Գ, 2)։ Այս ա-
ւելի արեւելայց յատուկ էր, և Դ դարուն
վերջերը կ'երևէ նաև յԱրևմուտս, սկսեալ
Միլանո եկեղեցիէն, ուր Ս. Ամբրոսիոս
կը ներբողէ զայն, արանց և կանանց,
կուսանաց և երիտասարդաց ձայներու
ներդաշնակ խառնուրդը՝ ծովու ալեաց
մոնչիւնին նմանեցնելով (Ի Սղմ. Ա)։

Բայց տեսնուեցա՞ւ որ այդ հասարակաց
երգերուն մէջ բառերու կամ եղանակի ան-
վարժներ ալ մտնելով, խառնակութիւն կը
ծագէր, մանաւանդ նուազ զարգացեալ կե-
դրոններու մէջ։ Այս պարագայն արդէն
պատճառ եղած էր՝ որ կանուխէն յատուկ
երգիչներ կարգուէին, որոնց հետ դարձեալ
կ'երգակցէր ժողովուրդը։ Եւ շփոթութեանց
առաջին առնելու համար՝ Դ դարուն Հա-
ւողիկեայ ժողովը սահմանեց՝ որ « քաց
անոցմէ որոնք կանոնաւորապէս երգիչք
կարգուած են, և կ'երգեն զըրբ վրայ,
ուրիշներ ամբոն չեղնեն և չերգեն եկե-
ղեցւոյ մէջ » (կան. ժն)։ Այս կարգաւո-
րութեան պէտքն ամէն տեղ զգալի եղաւ,
և Զ դարուն վերջերը Ս. Գրիգոր Պապը,
որ արևմտեան երգեցողութիւնը սքանչ-
ելապէս կարգաւորեց, նոյն իսկ քահա-
նայից և սարկաւագաց անգամ արգիլեց

մասնակցիլ դպրաց երգերուն (Մարտինի, Բար. Քրիստ. Հեր. 164)։ Յիշեալ կրօնէք՝ յատուկ պաշտօնեայններ են, ինչպէս կը վկայեն Լաւորիկեայ ժողովը (կան. ԻԳ), Առաք. Սահմանադրութիւնը (Բ, ԾԵ), Ս. Եփրեմ (Յղ. Բ Յիսե.) և այլք, և որոնք ըստ Առաք. Սահմ. որ և է եկեղեցական աստիճան կամ օրհնութիւն չունին։

Անցան դարեր, երգի ճաշակը զարգացաւ Եւրոպական ազգերուն մէջ, և երկսեռ ժողովուրդը սկսաւ դարձեալ, ինչպէս այսօր կը տեսնենք, երգել պարզ եղաւ նախնիներ, արուեստաւորները թողլով երգչաց խմբերուն։ Արեւմտեան ծիսի կեդրոնները սակայն չեն ընդունած սակաւին կանանց մասնակցութիւնը խմբերուն, մինչդեռ կանանց առանձինն կրնան երգել իրենց սեպչական տաճարներուն մէջ։

Ձ. — Իսկ ինչպէս էր մեր ազգին մէջ։ Մեր խնդրով և Հայոց դարձին կողմանէ նշանաւոր Գ. դարը՝ մեզ համար մութ է։ Ազաթանգեղոսի ոսկեդարեան ժողովուրդի զ'ըսէ արգարել՝ թէ Հայ ժողովուրդն յետ միջուկուն Եփրատի մէջ, «սաղմոսիւր և օրհնութեամբ» կը դիմէր յեկեղեցին (1862, 622)։ Բայց այս՝ Արտաքին երգեցողութիւն մ'է՝ քան ներքին, եթէ սակայն արտաքինն իսկ՝ երեակայութեան արդիւնք չլինի զեռ նոր քրիստոնէացած Հայոց նկատմամբ։

Սակայն ներքինն մասին կրնանք աւելի համարձակ խօսիլ։ Նախ քան զգիտ զրոց՝ Հայ եկեղեցւոյ պաշտամանն լեզուն՝ յունարէն կամ ասորերէն էր, որոցմէ ժողովուրդը նշանախից մ'իսկ չէր հասկընար։ «Յորմէ ոչինչ էին կարող լսել և օտսել ժողովուրդին այսպիսի մեծ աշխարհ» (Փարպ. 1873, 36)։ Հետեալաւ և ոչ կրնար մասնակցիլ երգոց, որոնք քնականապէս պաշտօնէից բաժին պիտի մնային, և որ դարաւոր տեղութեամբ սովորութիւն կը դառնայ ազգիս. այնպէս որ յետ զրոց գիւտին ժողովուրդն եռանդուն ուշադրութեամբ կը հետեի եկեղեցւոյ մէջ հայացած սաղմոսաց, կ'ուսանէ և կ'երգէ իսկ, «սաղմոսելով և կցորդս ասելով ընդ

ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փոքոցս և առանին» (Նոյն, 47), բայց ոչ և եկեղեցւոյ մէջ, յորում կը շարունակէ նախկին ոճը. «Չայնք պաշտօնէիցն (միայն) ի սուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսն» (Եղիշէ, 1893, 125)։

Կանայք ալ գիտեն սաղմոսները, և իրենց տներուն մէջ միշտ ի բերան ունին, բայց մեղմօրէն միմիջեւով միայն. «Սաղմոսը էին մշտնջենաւորը միմուկք ի բերանն նոցա» (անդ, 386), և չեն համարձակիր բարձրաձայն երգել արանց պէս։ Արդէն արտաքին կենցաղավարութեան մէջ իսկ՝ շատ ամփոփ էր անոնց ասպարէզը Նոյն ինքն Դ-ի դարերուն, որ անոնց մեծազոյն ազատութեան շրջանը կրնայ համարուի մեր ազգին մէջ, ինչպէս ցուցած եմ այլուր (Ճշգր. և խնդր., 123, 141)։ Մնապաշտ համոզմունք հետ զհետէ անոնց դէմ հակառակութիւն մը կը ստեղծեն կղերին մօտաց մէջ, և մինչև իսկ Մշույ Ս. կարապետի ու Շաղատոյ Ս. Ստեփանոսի դռները կը փակուին անոնց դէմ (ՅՏ. Մամիկ. 9. Որքել. Ժ)։ Ե միջնադարեան ինչ ինչ կանոններ զանոնք պիտի կը համարին և հեռի կը պահեն ի սրբութեանց։ Հետեալաւ հաւանական չէ՝ որ երբեք կանայք եկեղեցեաց մէջ ձայն բարձրացուցած և երգած լինին։

Մեր երգիչ պաշտօնեայք՝ նման միւս եկեղեցեաց զատ դաս մը չէին, ինչպէս պիտի կարծուէր Եղիշէի խօսքէն, «սաղմոսերգոյր և զբաղարդացք» (212)։ Այլ ըստ յայտնի բացատրութեան Մանդակունոյն՝ ընտրուած էին կղերին փոքրագոյն աստիճանաւորներէն, այսինքն գրասկարդացեալներ, որ զասական բառով դպիր ալ կը կոչուէին։ «կորուսանէ, կ'ըսէ նա, և զսաղմոսերգոյն սատանայ, եթէ... ոչ զպատգամն Աստուծոյ պատմեցն և զօրհնութիւնս և նորա երգեցն» (1860, 25)։ Ուրեմն Նոյն աստիճանաւորը կրկին պաշտօն ունէր, ասոր համար Պատարագի հին ազգարարութիւնը կ'ըսէր, «Սաղմոս սասցէք տեսն Աստուծոյ մերոյ՝ դպիրք» (Խոսք. Մեկ. Պար. 60)։ Այս կրկնակի

պաշտօնը պատճառ եղաւ՝ որ միջին դարուն « զպիւր » բառը կորուսանէ ընթերցողի հին իմաստը և նշանակէ միայն երգիչ։ Սակայն դիտելի է՝ որ քաջանայութենէ վար աստիճանաւորը՝ որով և զպիւրը՝ Հայոց մէջ իրապէս երկար գոյութիւն չեն ունեցած։ Ըստ որում փութով կու տային բոլոր աստիճանները մինչև ցեահանայութիւն։ Է դարուն զեռ կային անոնք, որով կոմիտաս կաթողիկոս նամակի մը մէջ ողջոյն կը յղէ «... ի սարկաւազացս և ի ցպրացս » (առ Սերէոսի, Գ, ԺԵ)։ Ի դարուն խոսքով կը յիշէ զանոնք՝ ընդհանուր պաշտօնէից հետ՝ Պատարագի աղօթից մեկ նութեան մէջ (43), ուսկից սակայն չենք կրնար հետեցնել թէ իրօք ալ կային։ Ինչ հակառակն ժի դարուն լատերոնացի կը վկայէ՝ թէ իւր ծննդենէն ի վեր բնաւ չէ տեսած զանոնք մեր ազգին մէջ. և « մոռացեալ է բնաւին ի մտաց մերոց, կ'ըսէ, թէ այլ աստիճան կայ յեկեղեցի բայց ի քահանայից և յեպիսկոպոսաց » (Մեկ. Պար. 87)։ Յայտնի է ուրեմն՝ որ այս վիճակը քան զինք շատ կանուխ սկսած էր։ Որով և եկեղեցական երգեցողութիւնը դարերու շրջանին մէջ կատարուեր են սոսկ աշխարհականներէ, ոչ օրհնութեան դպիրներէ։

3. — Եզրակացնենք հիմայ՝ իթէ ընդհանուր քրիստոնէական Եկեղեցին իւր նախկին դարերուն մէջ, ուր աւելի մօտ և ծանօթ էր Աւետարանի հոգւոյն և աւանդութեանց, ուր աւելի խիստ էին իւր կարգերը, և հաւատացելոց բարոյականն աւելի մաքուր, ուր Առաքելոյն հետ քաւորացելով և մեզ ալ ուսուցանելով հանդերձ՝ թէ « անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոյ խօսել », վայելուչ համարեցաւ որ անոնք աստուածային օրհնութեանց մասնակցէին, և վերահաս արգելքը՝ լոկ

երգեցողութեան մէջ յառաջ եկած խառնակութեան արդիւնքն եղաւ, որով և բոլոր ժողովրդեան զրուեցաւ, իսկ այժմ վերցած է արդէն, կը հետեի՝ որ կանանց երգակցութիւնը կրօնական տեսակիւրով հակառակ չէ պատշաճից։ Եւ եթէ Հայ Եկեղեցին՝ ի սկզբան ծիսական լեզուին օտարութեան պատճառաւ երգել չտուաւ իւր ժողովրդեան, և յետոյ երկար զարբէրէ ի վեր մինչև ցարդ երգեցողութիւնը յանձնած է արդէն ժողովրդէն ընտրուած վարժ երգիչներու՝ առանց հակառակ համարելու զայդ հայ ծիսին, և եթէ մեր տոհմային բարքերու զարգացումն այսօր ընդարձակած է կանոնը ընկերական ասպարէզն ալ, կը հետեի որ վերջնոյս մասնակցութիւնն ևս երգոց՝ սկզբաւ հակառակ լինելու չէ վայելչութեան ու ծիսի։

Սկզբաւ՝ ըսի. որովհետեւ՝ եթէ եւրոպական զարգացման հաղորդ արեւմտեան Եկեղեցին իսկ տակաւին հասարակօրէն չէ ընդունած կանանց իւրն ամբողջ վրայ, կրնայ լինել որ հայ Առաջնորդը աւելի իրաւունք ունենան զգուշանալու՝ նկատելով մեր ազգին սեպհական հանգամանքները։ Ինձ կը թուի՝ թէ հայ կիներ ամբողջն երգելէ յառաջ՝ պէտք էր նախ իւր ձայնը բարձրացնել ժողովրդեան հետ եկեղեցւոյն մէջ, սկսելով զարգացեալ կեդրոններէ, որով մեր հասարակութիւնը կը վարժէր անոր մասնակցութեան, և ապա աւելի բնական կը լինէր նաև ամբողջն լսել զայն։ Ասով կը փարատէր այն կասկածը, — եթէ կայ, — թէ մի՞ գուցէ ըստ ինքեան օգտակարը՝ մեր բնիկ պարագայից պատճառաւ փաստակար դառնայ։ Յամենայն դէպս՝ սոսկ բարեկարգական խնդիր մ'է այս ըստ իս, որոյ լուծումն Առաջնորդաց խոհմութենէն կը կախուի։

Հ. ՎԱՐՈՒՆ ՀԱՅՈՒՆԻ